ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով զոհված զինծառայող Արթուր Տիգրանի Մանուկյանի մոր՝ Անուշ Սուրենի Հովհաննիսյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերով, Վանաձոր համայնքի ղեկավարի 22.12.2016 թվականի թիվ 614-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 16.06.2021թ. եզրակացությամբ՝ որոշում եմ.

1. Հաստատել զոհված զինծառայողի բնակարանի կարիքավոր ընտանիքի ամփոփ ցուցակը:
2. Սույն որոշումը և ամփոփ ցուցակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 14
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հուլիսի 2021 թվականի N 1480

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ 1 ՆՐՔԱՆՑՔ 3 ՇԵՆՔ, ԹԻՎ 34 ՀԱՍՅԵՈՒՄ
ԳՏՆԿՈՂ ԱՍՅԱ ՄԵԼԻՔԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ասյա Մելիքի Մատինյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29052014-06-0030 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից 08.07.2021թ. տրված թիվ ՄՏ-08072021-06-0514 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Իսահակյան 1 նրբանցք 3 շենք, թիվ 34 հասցեում գտնվող Ասյա Մելիքի Մատինյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Իսահակյան փողոց, 1-ին նրբանցք, 3 շենք, թիվ 34 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 14
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1481

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4, ՄԵՔԵՆԱՇԽՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 18
ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ
հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Տարոն-4, Մեքենաշինարարների թաղամաս թիվ 18 շենքի հարավային
մասում գտնվող 0.01415հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.
Վանաձոր, Տարոն-4, Մեքենաշինարարների թաղամաս, թիվ 18/9-2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. հուլիսի 15
Ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1482

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ, ՔՈՐԵՋ ԹԻՎ 9/1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ
հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս, Քորեջ թիվ 9/1 հասցեին կից գտնվող 0.0024 հա
մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4, Քորեջային
թաղամաս, թիվ 9/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1483

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՋԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50/1 ՀԱՍՑԵԻ
ՀՅՈՒՄԱՆԻՏԱՐԻԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոց թիվ 50/1 հասցեի հյուսիսային մասում գտնվող 0,00077հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գր. Լուսավորչի փողոց, թիվ 50/1-5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1484

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱԿ ԹԻՎ 63-13/1 ՀԱՍՑԵՈՒՄ
 ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
 ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌԱՖԱՅԵԼ ԳԱԳԻԿԻ
 ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02
 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 777 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ
 ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Գագիկի Գալստյանի 11.04.2019թ. թիվ 067/2159 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09042019-06-0066 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 63-13/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 25.36քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 65940 (վաթսունհինգ հազար ինը հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 27.2քմ մակերեսով հողամասը 123060 (հարյուր քսաներեք հազար վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռաֆայել Գագիկի Գալստյանին:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռաֆայել Գալստյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առավաճառքի պայմանագիր:
3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 02 մայիսի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 63-13/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Ռաֆայել Գագիկի Գալստյանին օտարելու մասին» թիվ 777 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Գաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1485

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 16/1-2 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՀՎԱԾ
ԱԿՏՈՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՅՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏՅՈՒՄ ՏԱՄԻԼԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Տամիլի Ղումաշյանի 26.01.2021թ. թիվ 1161 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25062021-06-0030 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ), դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Մ. Նալբանդյան փողոց, թիվ 16/1-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 33.97քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 28.6քմ) ավտոտնակը 71340 (յոթանասուներեկ հազար երեք հարյուր քառասուն) դրամով, 5.68քմ մակերեսով պարիսպը 23860 (քսաներեք հասար ութ հարյուր վաթսուն) դրամով և դրանցով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 152.0քմ մակերեսով հողամասը 446880 (չորս հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արտյոմ Տամիլի Ղումաշյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արտյոմ Տամիլի Ղումաշյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, պարիսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳՏՆՎՈՂ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1486

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 67 ԵՎ ԹԻՎ 67
ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱԳԻԿ ԿՈԼՅԱՅԻ ՄԱՆՈԿՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀՈՒ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Կոլյայի Մանուկյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052018-06-0006 և թիվ 10052018-06-0007 վկայականները, Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 08 հունիսի 2021 թվականին տրված թիվ 38 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 67 և թիվ 67 հասցեներում գտնվող, Գագիկ Կոլյայի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.06563հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Միավորել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 67 և թիվ 67 հասցեներում գտնվող, Գագիկ Կոլյայի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.06563հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 1479,34քմ մակերեսով շինությունները՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

3. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 67 և թիվ 67 հասցեներում գտնվող, Գագիկ Կոլյայի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.06563հա ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ որպես հասարակական կառուցապատման հողեր՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գ.Նարեկացու փողոց, թիվ 67/3 բնակելի տուն և հասարակական սպասարկման օբյեկտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1487

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-4 ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 46 ՇԵՆՔԻ
ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թաղամաս, թիվ 46 շենքի հարավարևմտյան մասում գտնվող 0.0024հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Տարոն-2, Քոթեջային թաղամաս, թիվ 25/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1488

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ, ԹԻՎ 1Գ ՀԱՍՑԵԻ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՏԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 1գ հասցեի արևմտյան մասում գտնվող 0.00481հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 2/6-2/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1489

ՎԱՆԱՃՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ, ԹԻՎ 1Գ ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 1գ հասցեի արևելյան մասում գտնվող 0.02452հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 2/6-2/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1490

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ
հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 43 շենքի հյուսիսային մասում գտնվող
0.00198հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նարեկացու
փողոց, թիվ 43/12-1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱԽՈՂ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Գաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1491

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 11 շենքի հարավային մասում գտնվող 0.00198հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Թումանյան փողոց, թիվ 9-19/9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. հուլիսի 15
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1492

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-7 ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 43 ՀԱՍՑԵԻ
ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-7 թաղամաս, թիվ 43 հասցեի կիսակառույցի արևելյան մասում գտնվող 0.00419հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տաշիրի խճուղի, թիվ 5/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՆԵՍԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1493

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 70/45-1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆԿՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ
ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԹՈՒՐ
ԷԴԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Էդիկի Մանուկյանի 25.01.2021թ. թիվ 975 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15062021-06-0060 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի բ), գ , և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի, թիվ 70/45-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 7.13քմ ընդհանուր մակերեսով աստիճանահարթակը՝ 134760 (հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր վաթսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 11.48քմ մակերեսով հողամասը՝ 33760 (երեսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արթուր Էդիկի Մանուկյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արթուր Էդիկի Մանուկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աստիճանահարթակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1494

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6-1/2, ԹԻՎ 6-1/3 ԵՎ ԹԻՎ 6-1/4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԼԼԱ ՍԵԼՄԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Սելմանի Նազարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10102018-06-0054, թիվ 02022021-06-0034 և թիվ 15032021-06-0031 վկայականները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 6-1/3 հասցեում գտնվող 0.00208հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 6-1/3 հասցեում գտնվող 23.23քմ մակերեսով մառանի գործառնական նշանակությունը բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակության շինություն՝ խանութ:
3. Միավորել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 6-1/2, թիվ 6-1/3 և թիվ 6-1/4 հասցեներում գտնվող Ալլա Սելմանի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.01414հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 177.03քմ ընդհանուր մակերեսով խանութները՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:
4. Սույն որոշման 3-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 6-1/2 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՎԱՆԱՁՈՐ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1495

ՎԱՆԱԾՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դարիկո Մեխակի Խանումյանի և Արայիկ Վիգենի Թորոսյանի լիազորված անձ Նաիրա Վիգենի Թորոսյանի դիմումը, 03.09.2020 թվականին տրված թիվ 50 ԱԲ 4804555 լիազորագրի թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 741-20200925-64-4739649), 11.01.2021թ. սեփականության իրավունքի թիվ 20 (նոտարական ակտի կոդ: 741-20210108-84-4871856) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 21 (նոտարական ակտի կոդ: 741-20210108-84-4871855) վկայագրերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1740354 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 17^ա հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Շինարարների փողոց, թիվ 17-1 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1496

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 88/2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԱԼԵՔՍԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԶԱՏԻԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսան Արշալույսի Զատիկյանի լիազորված անձ Աշոտ Սերգեյի Ավետիսյանի 09.06.2021թ. թիվ 8211 դիմումը, 25.06.2019թ. տրված թիվ 3621 (նոտարական ակտի կոդ: 594-20190625-90-3967142) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24032020-06-0061 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.06.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-85/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, 18-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Աղայան փողոց, թիվ 88/2-1 հասցեում գտնվող, Ալեքսան Արշալույսի Զատիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 14,31քմ) խանութը:

2. Ալեքսան Արշալույսի Զատիկյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 18.0քմ արտաքին մակերեսով խանութի համար 70890 (յոթանասուն հազար ութ հարյուր իննսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց, թիվ 88/2-1 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ղ Աղայան, թիվ 88/2-4 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄԱՍԻՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1497

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՆՐՔԱՆՑՔ, ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԻՔԵԿՅԱՆ-ՀԱԿՈՔՅԱՆԻՆ, ԼԻԼԻԹ ՀԱՄԼԵՏԻ
ՍԱՐԻՔԵԿՅԱՆ-ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻԱՄ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԻՔԵԿՅԱՆ-
ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Համլետի Սարիքեկյան-Հակոբյանի, Լիլիթ Համլետի Սարիքեկյան-Հակոբյանի և Մարիամ Համլետի Սարիքեկյան-Հակոբյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12092012-06-0124 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման 09.06.2021թ. թիվ ՄՏ-09062021-06-0235 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Մաշտոցի նրբանցք, թիվ 6 հասցեում գտնվող, Հովհաննես Համլետի Սարիքեկյան-Հակոբյանին, Լիլիթ Համլետի Սարիքեկյան-Հակոբյանին և Մարիամ Համլետի Սարիքեկյան-Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մաշտոցի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1498

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՊՈԽՇՅԱՆ ՓՈՂՈՅ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ
ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ՀՐԱՋԻԿԻ
ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՋԵԼՈՒ,
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի (ծնված՝ 07.08.1960թ.) լիազորված անձ Լուսինե Գառնիկի Ներկարարյանի (ծնված՝ 15.06.1990թ.) դիմումը, 26.02.2021թ. թիվ 800 (նոտարական ակտի կոդ: 763-20210226-90-4957420) լիազորագիրը, 23.02.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 06.04.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1975 (նոտարական ակտի կոդ: 763-20210403-84-5024940) և թիվ 1977 (նոտարական ակտի կոդ: 763-20210403-84-5025000) վկայագրերը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 21.06.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-80/21 Ի եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Պոռչյան փողոց թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ և դրան կից 300.0քմ ու այն գերազանցող 33.3քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1955-2004թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 733.3քմ, որից 400.0քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու տնատիրությունների միջև: Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի բաժնեմասը կազմում է 533.3քմ (200+133.3+400:2):

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Պոռչյան փողոց թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար

անհրաժեշտ օրինական 200.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 300.0քմ հողամասը գերազանցող 33.3քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 147920 (հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քսան) դրամով:

2. Ճանաչել Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Պոռչյան փողոց թիվ 4 հասցեի 533.3քմ ($200+133.3+400:2$) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ 2001թ. մայիսի 15-ից հետո կառուցված 14.2քմ ընդհանուր մակերեսով պարիսպների:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գառնիկ Հրաչիկի Ներկարարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 33.3քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Վանաձոր քաղաքի Պոռչյան փողոց թիվ 4 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Պոռչյան փողոց, թիվ 4-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆԱԽԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1499

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 87/37 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԵՆ ՍԱՐԻՔԵԿԻ ՄՈՍԻՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Արեն Սարիքեկի Մոսինյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28122020-06-0078 վկայականը, Վանաձոր համայնքի ավագանու 19 մարտի 2021 թվականի թիվ 37 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 87/37 հասցեում գտնվող հողամասը՝ համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28122020-06-0078 վկայականի, նվիրատվությամբ հանձնել Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցք թիվ 12/9 հասցեի բնակիչ Արեն Սարիքեկի Մոսինյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արեն Սարիքեկի Մոսինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 0.046հա մակերեսով հողամասը նվիրատվությամբ հանձնելու պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. հուլիսի 15
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1500

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ 11 շԵՆՔԻ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱՐՍԵՆ ՌՈՒԴԻԿԻ ՂԱԼԱՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԱՐՄԵՆԻ
ԼԱՋԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Արսեն Ռուդիկի Ղալայանի և Անահիտ Արմենի Լազարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20112019-06-0053 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Զուխաջյան փողոց 11 շենքի թիվ 25 հասցեում գտնվող Արսեն Ռուդիկի Ղալայանին և Անահիտ Արմենի Լազարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զուխաջյան թաղամաս, թիվ 11 շենք, թիվ 25 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 15
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1501

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 12 ՇԵՆՔԻ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միեր Սարգսի Անդրեասյանի 25.05.2021թ. թիվ 02/7454 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳՍԻ ԹԱՄԱՁՅԱՆ ՈՌԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս, թիվ 12 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 6.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.0քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 6.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս, թիվ 12 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս, թիվ 23/4-2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1502

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ, ՔՇՀ-3, ԹԻՎ 46 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ժիրայր Գուրգենի Հովհաննիսյանի 23.02.2021թ. թիվ 2781 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՏԱՐՈՆ ՍԵՐՈՔՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների քննությամբ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3, թիվ 46 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 25.58քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.32քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.58քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3, թիվ 46 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս, թիվ 50/6-1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2021 թվականի N 1503

**ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆՊՐԱՆԻԿԻ ՓՈՂ ԹԻՎ 99/20 ՀԱՍՑԵՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԽՈՐՀԱՆՈՑԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԽՈՐՀԱՆՈՑ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Սեյրան Կոյայի Ասատրյանի 21.01.2021թ. թիվ 798 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1924075 վկայականը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փող թիվ 99/20 հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 6.6քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.89քմ) խորդանոցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կաղաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված խորդանոցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
